

Ք Ա Ռ Ա Ս Ն Ա Մ Ե Ա Կ

Հասայ քեզի քառասուն, քայլամուր ու նկուն.
 Էր երբեմն որ հեռուէն կը թուէիր գրաւիչ
 Ու կարծէի քեզ մերձիւ թօթափելով քիչ առ քիչ
 Իմ տաղտուկներն անհամար, ընծան անլոյս օրերուն...

Իդճերս ամէն պսակուած կը յուսայի տակաւին
 Հասնիլ քեզի, մինչ ահա տենչեր անհո՛ւն, բիրազա՛ն
 Համբուս վրայ ցից, դերբուկ արահետներ կը բանան.
 Քեզ սրտատրոփ ողջունել օրերը ինձ չտուին...

Գիտեմ թէ կեանք անուանուած տարիներու թափօրին
 Կեդրոնը դուն կը կենաս, կամ կատարէն քիչ մը վար,
 Ուրկէ անդին վայրէջքն է, վտանգներով անհամար.
 Վայրէջքին մէջ ըսպասե՞լ որ նոր յոյսեր դեռ վառին...

Գ. ՀԱՐՏԱՐ

9. 2. 1972